ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Ռուսական տպագրության 400-ամյակը

Այս տարի հանդիսավոր պայմաններում Սովետական Միության մեջ նշվում է ռուսական տպագրության 400-ամյակը։ Կազմված է հոբելյանական հանձնաժողով, Մոսկվայում, Կիևում և այլ քաղաքներում գումարվում են ՍՍՌՄ և Ուկրաինական ՍՍՌ գիտությունների ակադեմիաների հանդիսավոր ժողովներ և գիտական նստաշրջաններ՝ նվիրված նշանավոր տարեթվին։

1564 թ. մարտի 11-ին Մոսկվայում լույս ընծայվեց «Деяния апостолов» *(Գործք առաքելոց) կամ, ինչպես այն ժամանակներում ռուսներն էին ասում, «Ապոստոլ» գիրքը։ Դա ռուս տպագրության նշանավոր ռահվիրա Իվան Ֆեոդորովի հիմնած տպարանի առաջին արտադրանքն էր, մի ամբողջ տարվա ծանր, անխոնջ աշխատանքի արդյունքը։*

1563 թ. ապրիլին Իվան IV ցարի կարգադրությամբ Մոսկվայում, Նիկոլսկի փողոցի վրա, մի անշուք տնակում (այն տեղում, ուր այժմ Պատմա-արխիվային ինստիտուտն է) սկսեց աշխատել տպագրական մեքենան։ Ինքնագործ այդ տպարանը ստեղծել էր մոսկվացի Իվան Ֆեոդորովը իր օգնական, բելոռուս Պյոտր Մստիսլավեցի հետ։ Այդ օրերի Ռուսաստանում շատ դժվար գործ էր տպարան աշխատեցնելը և գիրք հրատարակելը։ Այդ է պատճառը, որ ռուսական պատմության մեջ առաջավոր մարդիկ Իվան Ֆեոդորովի խիզախ աշխատանքի, նրա ողջ գործունեության մեջ միշտ էլ խիզախ սխրագործություն են տեսել։ Պատահական չէ նաև այն, որ երբ պարզվեց, թե 1564 թ. առաջ էլ Մոսկվայում գրքեր են տպագրվել, դարձյալ Ֆեոդորովին մնաց ռուս առաջին տպագրիչի դափնին և ռուսական տպագրության սկիզբը շարունակվեց համարվել նրա «Գործք»-ի հրատարակումը։

Այս հարցում կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ի. Ֆեոդորովն էր Ռուսաստանում առաջին մշտական *տպարանի հիմնադիրը, ապա և այն, որ Մոսկովյան առաջին* թվակիր տպագրությունը *նրա «Գործք» գիրքն է։*

Այս գիրքը «Նոր կտակարանի» երկրորդ մասն է։ Անշուշտ, հարց պիտի ծագեր, ինչու են Մոսկվայում «Նոր կտակարանի» տպագրությունն սկսել նրա երկրորդ մասից, արդյոք առաջին մասի տպագրության փորձ չի՞ արվել։ Հետաքրքիր է, որ Ֆեոդորովը իր գրքի հիշատակարանում գրում էր, թե Մոսկվայում տպագրության արվեստի ուղղությամբ «որոնումներ» են եղել «Գործք»-ի տպագրությունից դեռևս 10 տարի առաջ։ Ռուսական գրավոր աղբյուրների մեջ էլ նույնպես խոսք կա նախաֆեոդորովյան «անարվեստ տպագրության» մասին։

Եվ ահա սովետական գրքագետները հայտնաբերեցին «անարվեստ» տպագրված այդ գրքերը, որոնց մեջ, ինչպես և պետք էր սպասել, կային նաև ավետարաններ, այսինքն՝ Ֆեոդորովի հրատարակած գրքի առաջին մասը։

Այժմ գտնված է նախաֆեոդորովյան երեք տպագիր ավետարան, իրոք անարվեստ տպագրությամբ։ Այս գրքերը անթվակիր են, միայն նրանցից մեկի վրա կա ձեռագիր նվիրատվական հիշատակագրություն՝ 1559 թ.։ Մանրազնին ուսումնասիրությունները քննասերներին այն եզրակացության են բերել, որ այդ գրքերի տպագրությունը սկսվել է 1553—54 թթ.։ Ըստ որում որոշ դեպքերում տպագրությունը շարունակվել է մոտ տասը տարի։

Այդպիսով, պարզվեց, որ եղել է ռուս տպագրության նախաֆեոդորովյան շրջան, որն այժմ ընդունված է կոչել որոնումների *շրջան։ Եվ, իրոք, դա տպագրական արվեստի որոնումների և փորձերի մի ժամանակաշրջան էր, Ռուսաստանում խսկական տպարան ստեղծելու նախապատրաստության ժամանակամիջոց։ Այդ որոնումների հիման վրա ստեղծվեց Ֆեոդորովի բարձրարվեստ տպարանը և ասպարեզ եկավ նրա գիրքը, որ այսօր էլ հիացմունք է պատճառում իր երկգույն գեղազանց տպագրությամբ, հրաշալի զարդագրերով, գլխազարդերով ու վերջազարդերով։*

Շատ կարևոր է նաև այս գրքի նշանավոր հիշատակարանը, ուր Ֆեոդորովը պատմում է տպարանի հիմնադրման մասին, խոսում տպագրական գործի ու գրքի մեծ նշանակության շուրջը։ Այս հիշատակարանը, ինչպես և տպագրիչի մյուս գրքերի հիշատակարանները, հասարակական մեծ եռանդի տեր մարդու հրապարակախոսական ելույթներ են ժամանակի առաջավոր գաղափարների տարածման նպատակով։

Վերջին տարիներս սովետական գիտնականները մեծ աշխատանք են կատարել ռուսական տպագրության առաջին քայլերը ուսումնասիրելու ուղղությամբ։ Հնագրերի փաստերով ապացուցվել է, որ ռուսական նորաստեղծ տպագրությունը եղել է ինքնուրույն և ինքնատիպ։ Հերքվել է այն տեսակետը, թե արևմտաեվրոպական տպագրիչներն են մասնակցել Ռուսաստանում տպագրության հիմնադրմանը։ Փաստերն ասում են, որ եվրոպական երկրներում տպագրված գրքերը, այդ թվում սլավոներեն, հայերեն և լատինատառ տպագրությունները օգտագործվել են առաջին ռուս տպագրիչների կողմից, սակայն եղած փորձն օգտագործելով Իվան Ֆեոդորովն ու նրա օգնականը իրենց առաջին տպարանը ստեղծել ու գործի են դրել ինքնուրույն կերպով։

«Գործք առաքելոց»-ից հետո Ֆեոդորովը տպագրում է երկու Ժամագիրք և ապա չդիմանալով իր պաշտոնական և անպաշտոն հակառակորդների հալածանքին՝ հեռանում է Մոսկվայից և առհասարակ Ռուսական կայսրության սահմաններից։

Ֆեոդորովը իր տպագրական սարքերը վերցրած՝ շրջում է մի տեղից մյուսը և ամենուրեք տարածում սիրած գործը։ Նա լինում է Արևմտյան Բելոռուսիայի Զաբլուդովո կոչված կալվածքում, ուր երկու գիրք տպագրելուց հետո տեղափոխվում է Լվով, այստեղ էլ տպարան հիմնում։ Այդպիսով, Ֆեոդորովը տպագրական գործը սկզբնավորել է նաև Ուկրաինայում և Բելոռուսիայում։ Լվովում 1574 թ. Ֆեոդորովը վերահրատարակում է «Գործք»-ը, տպագրում է մի «Այբբենարան» և տեղափոխվում Օստրոգ քաղաքը, ուր տպագրում է ևս մի քանի գիրք։

Ֆեոդորովի մահից հետո (1583) Ռուսաստանում և Ուկրաինայում տպագրական գործը շարունակում են նրա աշակերտները և այնուհետև աշակերտների աշակերտները, երևան են գալիս ուրիշ տպագրիչներ։ XVII դարում Ռուսիայի տարբեր վայրերում արդեն աշխատում էին մի շարք ինքնուրույն տպարաններ։

Ռուսական գրատպության հիմնադրումը, ի տարբերություն այլ ժողովուրդների տպագրության սկզբնավորման, կապված էր այդ ուղղությամբ պետության կողմից արված կարգադրության հետ։ Սակայն բնորոշ է նաև այն, որ այդ տպագրական-հրատարակչական գործը հենց սկզբից գտնվում էր առաջավոր, ժողովրդի հոգսերով ապրող մարդկանց ձեռքին։ Ռուսական տպագրության առաջավոր ավանդները զգալի եղան նաև հետագա ժամանակաշրջաններում։

Պետրոս Առաջինի օրոք ռուսական տպագրության բնագավառում կարևոր բարեփոխություն է կատարվում՝ գրքերը սկսում են տպագրվել քաղաքացիական տառերով, որոնք պետք է փոխարինեին կիրիլյան դժվարընթեռնելի տառաձևերին (կիրիլիցային)։ 1708 թ. լույս է տեսնում քաղաքացիական տառերով տպագրված առաջին գիրքը՝ «Երկրաչափությունը»։ Այս թվականը համարվում է ռուսական քաղաքացիական տպագրության սկիզբը։ Մինչև 1800 թ. քաղաքացիական տպագրությամբ լույս է տեսնում շուրջ 10 000 անուն գիրք, որ մեծ քանակ է այն ժամանակաշրջանի Ռուսիայի համար։

Պետրոս Առաջինի օրոք է սկսում լույս տեսնել նաև ռուսական առաջին պարբերականը «Վեդոմոստի»-ն (1703)։

Ռուսական գրատպության գործը նոր աստիճանի բարձրացրեց հանրահայտ լուսավորիչ ու հրատարակիչ Ն. Նովիկովը։

Ռուսական տպագիր գրքի ու մամուլի պատմության հետ են կապված առաջավոր շատ մարդկանց անուններ. հիշենք Ռադիշչևին, որի նշանավոր գիրքը Եկատերինա կայսրուհին ավելի վտանգավոր էր համարում, քան Պուգաչովին։ Հիշենք նաև Պուշկինի, դեկաբրիստների և այնուհետև Նեկրասովի հրատարակչական աշխատանքը, Հերցենի և Օգարևի ազատության հնչակը՝ «Կոլոկոլը», Լ. Տոլստոյի ժողովրդական հրատարակչությունը՝ «Պոսրեդնիկը» և շատ ուրիշներ։ Ռուսական տպագիր գիրքն ու մամուլն էին ամենուրեք տարածում ռուս մեծ գրականության և հեղափոխական մտքի բոլոր պայծառ ներկայացուցիչների ստեղծագործությունները։

Կարևոր է եղել նաև ռուս տպագրիչների ավանդը տպագրական արվեստի զարգացման գործում։ Կարելի է հիշել, օրինակ, գրաշարական ինքնատիպ մեքենայի ստեղծողներ Ի. Լիվչակին և Մ. Ալիսովին, ինչպես և շատ ուրիշ վարպետների, որոնք զգալի աշխատանք են կատարել տպագրական արվեստի կատարելագործման ուղղությամբ։

Այսօր, երբ ռուսական գրքի և մամուլի հրատարակման գործը հասել է աննախադեպ զարգացման, անշուշտ, սիրով և գորովանքով ենք մարդիկ հիշում 400 տարի առաջ այդ գործի սկզբնավորողներին՝ այն համեստ վարպետներին, որոնք Ռուսաստանում առաջին տպագրական մամուլի տակից հանեցին ռուսական անդրանիկ գրքի էջերը։

Ա. Իշխանյան

Միքելանջելոյի ծննդյան 400-ամյակը

Փետրվարի 18-ին լրացավ իտալական Վերածննդի հանճարեղ դեմքերից մեկի՝ Միքելանջելոյի (Միքելանջելո դի Լոդովիկո դի Լեոնարդո դի Բուոնարոտի Սիմոնի) ծննդյան 400-ամյակը: Նա ծնվել է Կապրեզեում, 1475 թ. մարտի 6-ին: Միքելանջելոն սովորել է տարբեր մարդկանց արվեստանոցներում, բայց կարևոր էր նրա ուսուցումը հանճարեղ Դոնատելլոյի աշակերտի՝ Բերտոլդոյի մոտ, որի միջոցով Միքելանջելոն հնարավորություն ունեցավ գտնել իրեն հուզող բազմաթիվ հարցերի լուծումը: Դրա լավագույն ապացույցն էր «Աստվածամայրը աստիճանների մոտ» աշխատանքի ստեղծումը. այստեղ և՛ հին հունական արվեստի հմուտ գիտելիքներն են, և՛ Դոնատելլոյի արվեստի ազդեցությունն է, և, ամենակարևորը, ինքն է՝ Միքելանջելոն իր հանճարեղ արվեստի նախադրյալներով: Շուտով նա ստեղծեց մի քանի նոր գործեր («Բաքոսը», «Պիետա»), որոնց շնորհիվ, ինչպես գրում է նրա ժամանակակից կենսագիր Վազարին, «ձեռք բերեց... մեծ համարում և փառք. բոլորը համոզված էին, որ այս վարպետը ոչ միայն գերազանցել իր բոլոր ժամանակակիցներին ու նախորդներին, այլև կարող էր մրցել հին վարպետների հետ»:

Առաջին հերթին Միքելանջելոն հանճարեղ էր որպես քանդակագործ: Լինի դա միաֆիգուր աշխատանք, բազմաֆիգուր կոմպոզիցիա, ռելյեֆ, որոնք կատարվել են այս կամ այն անհատի պատվերով՝ միևնույն է, առաջին հերթին այդ ստեղծագործությունների հիմքում նա կարողանում էր դնել իրեն հուզող գաղափարները, մարդկային հոգու ապրումների հետ կապված ներքին էմոցիան, մարդկային մարմնի ձևերի գեղարվեստական լուծման իր սկզբունքները:

Միքելանջելոյի ստեղծագործական մեծագույն հաջողությունն էր նրա լավագույն գործերից մեկը՝ նշանավոր Դավիթը: Միքելանջելոյին նախորդող արվեստագետները, անդրադառնալով բիբլիական Դավթի կերպարին, պատկերում էին մի պատանու, որը արդեն հաղթանակ է տարել. նրա ոտքերի մոտ, որպես տրոֆեյ, պատկերվում էր Գողիաթի կտրված գլուխը: Այլ էր Միքելանջելոյի մոտ. նրա Դավիթը նոր է պատրաստվում պայքարի: Ի մի են բերվել ողջ ուժերը, մարմնի ամեն մի մկանը գտնվում է ծայրահեղ լարված վիճակում: Նա կանգնած է հաստատ, ինքնավստահ, և այդ մեծ ուժի կերպարին տալիս է նաև հաղթանակի հավատի արտահայտություն: Եթե Դավթի ֆիգուրը քանդակված էր հիմնականում մի կողմից դիտելու համար (դրան նպաստել էր ուրիշ քանդակագործի կողմից անհաջողներում փչացված մարմարի զանգվածը), ապա Միքելանջելոյի մյուս խոշոր ստեղծագործության՝ Մովսեսի կոմպոզիցիան կառուցված էր այնպես, որ հնարավորություն էր տալիս աշխատանքը դիտել բոլոր կողմերից: Առաջին հայացքից թվում է, թե բիբլիական ծերունին նստած է հանգիստ, ներքնապես ինքնամփոփ հոգեվիճակում, սակայն մի փոքր աջից դիտելու դեպքում պարզ է դառնում, որ նա լարված ունկնդրում է ինչ-որ ձայնի, և պատրաստ է անմիջապես վեր կենալ տեղից: Մարմնի բոլոր մասերը գտնվում են ակտիվ գործողության մեջ, և դա քանդակին հաղորդում է ներքին դինամիզմ:

Այսպիսին է Միքելանջելոյի քանդակագործական աշխատանքների ստեղծման հիմնական ելակետը. այդ շատ ավելի ուժեղ պահպանվել է նրա անավարտ, բայց տաղանդավոր սկսված երկու աշխատանքներում՝ «Մեռնող ստրուկը» և «Արթնացող ստրուկը» գործերում: Հատկապես վերջին ստեղծագործության դիտողին թվում է, թե Միքելանջելոն ցանկանում է մարմարի զանգվածի միջից ազատել կաշկանդված ստրուկի ֆիգուրը, որը ձիգ է գործ դնում դուրս գալ մարմարի ճնշումից: Այս աշխատանքները («Մովսեսը», «Մեռնող ստրուկը», «Արթնացող ստրուկը») կատարված են Հուլիոս II պապի դամբարանի համար, որն ըստ Միքելանջելոյի մտահղացման պետք է ունենար այս տիպի քառասուն ֆիգուր: Եթե այս գործերում զգացվում է դեռևս «Դավթից» եկող մարդկային ներքին ուժի, նրա ակտիվ գործունեության արտահայտման մեծ ձգտումը, ապա այլ էին Մեդիչիների դամբարանի քանդակները: Այս կոմպլեքսում արդեն («Ջուլիանո Մեդիչի», Լորենցո Մեդիչի», «Գիշեր», «Ցերեկ», «Առավոտ», «Երեկո») զգացվում է ներքին հոգնածություն, հանգիստ վիճակ: Թվում է, թե քանդակագործը այդ ինքնամփոփ սիմվոլիկ ֆիգուրների միջոցով արտահայտում է կյանքի ու մահվան միջև մղվող պայքարի փիլիսոփայությունը:

Միքելանջելոյի քանդակները դիմացել են ժամանակի քննությանը և մնացել ռեալիստական արվեստի ոսկե ֆոնդում՝ որպես մարդկային վեհ գաղափարների ու նրանց ստեղծագործական ներդաշնակության փայլուն օրինակներ: Միքելանջելոյի ամեն մի քանդակագործական աշխատանք յուրատիպ ներքին նպատակասլացությամբ լրացնում է նրա մյուս գործերը և ստեղծում գաղափարական հետևողականության ու արվեստի կատարելության մի հզոր ամբողջականություն:

Հանճարեղ էր Միքելանջելոն նաև որպես նկարիչ։ Դրա պերճախոս վկայությունն են Սիքստինյան կապելլայի առաստաղի և բեմի պատի նկարազարդումները։ Վերջիններից էր «Ահեղ դատաստանը»՝ մարդկային հզոր մարմինների մի ողջ զանգված, որ ստեղծում է գերերկրային գործողության պատրանք։ Եթե ժամանակակիցները այստեղ գտնում էին գույնի պակաս հագեցվածություն, ապա նրանք այդ բացը չտեսան Միքելանջելոյի հոյակապ ստեղծագործության՝ Սիքստինյան կապելլայի առաստաղի նկարազարդման մեջ։ Հարյուրավոր ֆիգուրներ տարբեր դիրքերում, տարբեր շարժման մեջ, բազմաթիվ գործողություններ, բազմաթիվ կերպարներ, որոնք պատկերում էին բիբլիական մի շարք սյուժեներ. այդ կերպարները իրենց քանդակային հստակությամբ, գծանկարի հզորությամբ, հոգեբանական ներքին պոռթկմամբ մրցում էին իրար հետ իրենց կատարելությամբ։ Սիքստինյան կապելլայի առաստաղի նկարազարդումներում երևան եկավ Միքելանջելոյի ոչ միայն դեկորատիվ նկարազարդման մեծ կարողությունը, այլև նրա տաղանդավոր ճարտարապետ լինելը (հայտնի են նրա նախագծով պատրաստված Լաուրենցյան գրադարանի սանդուղքները, Ս. Պետրոսի տաճարը և այլն), որի շնորհիվ Սիքստինյան կապելլայում ստեղծվեց երկու արվեստների հոյակապ սինթեզ։

Իր ժամանակի պահանջների, ոգու, ձգտումների մեծագույն մարմնավորումն էր Միքելանջելոն։ Մարդու, կյանքի նկատմամբ ունեցած հավատը, գեղեցկի անընդհատ ձգտումը, մտքի և հոգու ներդաշնակության որոնումները արտահայտվեցին նաև նրա բանաստեղծությունների մեջ, որոնց հեղինակը, անկասկած, զիջում է քանդակագործ, նկարիչ ու ճարտարապետ Միքելանջելոյին։ Սակայն կատարյալի ձգտման նրա ընդվզումներում այդ բանաստեղծությունները ևս ունեցել են իրենց խոշոր արժեքը։

Միքելանջելոն մեռավ 89 տարեկան հասակում, մեռավ իր արվեստանոցում, աշխատելիս, անավարտ թողնելով բազմաթիվ մտահղացումներ։ Սակայն կատարվածի մեկ մասն անգամ բավական էր, որպեսզի Միքելանջելոյի անունը դասվեր համամարդկային անմահների շարքը։

Մ. Ղազարյան

Ս. Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը

Լրացավ սովետահայ խոշորագույն նկարիչներից մեկի՝ Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը, որը լայնորեն նշվեց մեր հանրապետության մեջ։ Դժվար է Հայաստանում գտնել մի նկարիչ, որը կրած չլինի Աղաջանյանի արվեստի ազդեցությունը։ Դա կատարվել է և՛ այն դեպքում, երբ ուսանելով Երևանի գեղարվեստի ուսումնարանում երիտասարդ ստեղծագործողները լսել են նրա զրույցները արվեստի մասին, և՛ այն դեպքում, երբ Հայաստանի պետական պատկերասրահում, կանգ առնելով նրա նկարների սրահում, գտել են իրենց որոնումների բանալին։

Ուսանողական տարիներին Աղաջանյանի կատարած ալբոմները վկայում են այն խոր գծանկարչական կարողությունների մասին, որոնք հայտնաբերվել են նրա մոտ՝ Ժյուլիենի մասնավոր գեղարվեստական ակադեմիայում (Փարիզ) ուսանելու տարիներին։ Անատոմիական կառուցվածքի խոր գիտելիքներ, գծանկարի ամրություն, ձևի կատարելության ձգտում — ահա այդ գծանկարների հատկանշական կողմերը։ Սակայն ակադեմիական աշխատանքների մեջ յուրահատուկ տեղ են գրավում գեղանկարչական դիմանկարները, որոնք իրենց մեջ կրում են Աղաջանյանի հետագա դիմանկարների խոր ռեալիզմը։ Դրանց մեջ նշանակալից է հատկապես Լենինականի գավառագիտական թանգարանից բերված «Փարիզուհու դիմանկարը», վաղ շրջանի մի գողարիկ ստեղծագործություն, որտեղ հանդես է եկել Աղաջանյանի մեծ կարողությունը օգտագործել գույնը, որպես կերպարի տրամադրությունն արտահայտող գործոն ուժ։ Հետագայում նա ստեղծեց բազմաթիվ բարձրարժեք հոգեբանական աշխատանքներ, որոնցից են՝ «Հոր դիմանկարը», «Մոր դիմանկարը», «Մտորումներ», «Քրոջ աղջկա դիմանկարը» և այլ ստեղծագործություններ։

Փարիզում անցկացրած տարիները հնարավորություն տվեցին Աղաջանյանին ծանոթանալու աշխարհահռչակ դիմանկարիչների գործերին, որոնցից նրա ուսուցիչները կարող են համարվել հատկապես Տիցիանը, Ռեմբրանդտը և Կուրբեն։ Նրանց կտավների ուսումնասիրությունը ներքին ուժ տվեց Աղաջանյանի գեղանկարչական զգացողականությանը, սակայն հայկական միջավայրն ու հայրենի կերպարվեստի տրադիցիաները Աղաջանյանի արվեստը դարձրին առավել ամբողջական։

Աղաջանյանի արվեստի դեմոկրատիզմի համար խոշոր նշանակություն է ունեցել Շուշի քաղաքի մարդկանց ու կենցաղին նրա քաջատեղյակ լինելը։ Նախ ընտանիքը, ապա շրջապատն ու մարդիկ՝ իրենց ուրույն ապրելակերպով ու հոգեբանությամբ բնորոշեցին Աղաջանյանի ստեղծագործական էությունը։ «Հոր դիմանկարը» ոչ միայն նկարչի հոր դիմանկարն է, մտերմիկ ապրումների ու որդիական տպավորությունների գեղանկարչական արտահայ-

տություն, այլև հասարակական մի ամբողջ խավի հոգևորական կերպավորում։ Հետագայում Աղաջանյանը դարձավ հոգևորական դիմանկարի անվանի վարպետ, որի թողած ժառանգության մեջ հանդիպում ենք և՝ բանվորների, և՝ արհեստավորների, և՝ իր ընտանիքի անդամների հետաքրքիր գեղարվեստական բնութագրումների։

Անվանի նկարիչը առաջիններից էր, որ եկավ Սովետական Հայաստան՝ դառնալով նոր կուլտուրայի ակտիվ ստեղծողներից մեկը։ Այդ է սովետական շրջանում նրա ստեղծած դիմանկարների թեմատիկան. այստեղ արդեն տեսնում ենք ժամանակի մտավորականության կերպարները, կարմիր հրամանատարին, կոմերիտուհուն, փոքրիկ պիոներուհուն, ադրբեջանցի կին օգաչուին և, վերջապես, Սուրեն Սպանդարյանի դիմանկարը։

Հոբելյանական օրերին Հայաստանի պետական պատկերասրահում բացվեց ականավոր նկարչի ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը ամենամբողջականն էր մինչ այդ կազմակերպվածների մեջ։ Ցուցահանդեսը ի մի էր բերել նկարչի կատարած աշխատանքը մի քանի տասնամյակների ընթացքում։ Ցուցադրված էին ինչպես դիմանկարներ, այնպես էլ Աղաջանյանի բավականին հետաքրքիր բնանկարները։ Ցուցահանդեսի օրերին Երևանի Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված անվանի արվեստագետին։ Ստեփան Աղաջանյանին նվիրված բազմաթիվ հոդվածներ զետեղեցին ռեսպուբլիկայի թերթերն ու ամսագրերը։ Հայպետհրատը հոբելյանի օրերին լույս ընծայեց արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Պարսամյանի աշխատությունը՝ նվիրված Ստեփան Աղաջանյանին։ Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը նշող հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի դոկումենտալ և խրոնիկալ ֆիլմերի կինոստուդիան էկրան դուրս բերեց նկարչին նվիրված մի ֆիլմ։

Չորս տասնամյակ տևող իր ստեղծագործական կյանքի ընթացքում Ստեփան Աղանջանյանը, անցնելով կյանքի ու ժամանակի դժվարությունների միջով, բարձր է պահել ռեալիստական արվեստին անշահախնդիր ծառայելու իր վեհ գաղափարները, և այսօր երախտապարտ արվեստասերները արժանին են մատուցում վարպետ ստեղծագործողին։

Մ. Գևորգյան

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1963 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գործունեության մեջ չափազանց կարևոր տեղ են գրավում հնագիտական արշավախմբերի դաշտային աշխատանքները։ 1963 թ. գործել են Կարմիր-բլուրի, Արին-բերդի, Գառնիի, Աբովյանի, Հենգավիթի, Լճաշենի, Ամբերդի հնագիտական արշավախմբերը, ինչպես և մեր ինստիտուտի ու Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի միացյալ վիմագրական արշավախումբը։ Նրանց աշխատանքների, ինչպես և մասնավոր հետազոտությունների շնորհիվ հայտնաբերվել են տարբեր դարաշրջանների զգալի քանակությամբ նյութեր, հավաքվել են մեծ թվով վիմագիր արձանագրություններ, որոնք խոշոր նշանակություն ունեն հայ ժողովրդի անցյալի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար։

1. ԷՆԵՈԼԻԹՅԱՆ ԵՎ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ա. Հենգավիթի պեղումները (25/10—20/12, դեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Ս. Սարգսյան)։ Հենգավիթի հնագիտական արշավախմբի ծրագրով նախատեսված էր պեղել Հենգավիթի հնագույն բնակատեղիի կենտրոնական մասի բնակարանները, պարսպի մի հատվածը և դամբարանները։ Պեղումների ընթացքում հայտնաբերվեց պարսպի մի հատվածը՝ աշտարակով և ստորերկրյա անցքի մուտքով, պարսպին կից բացվեցին իրար վրա գտնվող երկու կլոր կացարան և նրանց կից մի քանի քառանկյուն շենքեր։ Կլոր կացարանների կենտրոնում երևան եկան մի մեծ և մի փոքր կավե օջախներ։ Քառանկյուն շենքում բացվեցին խոշոր հորեր՝ ցորենի ու գարու մնացորդներով, այլուրի ամբար։ Հայտնաբերվել է զգալի քանակությամբ Հենգավիթին բնորոշ խեցեղեն, ինչպես և բազմազան տեսակի բնական կենդանիների ոսկորներ։ Պեղվեցին նաև մի քանի դամբարաններ, որոնք կողոպտված և ավերված են եղել դեռևս շատ հին ժամանակներում։

Բ. Լճաշենի պեղումները (15/6—30/7).— Լճաշենի արշավախմբի աշխատանքները (դեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Հ. Մնացականյան) կենտրոնացված են եղել երկու տեղամասում՝ ամրոցում և դամբարանադաշտում։ Ամրոցում, որը կանգնեցվել է շատ հին ժամանակներում և հարատևել է մինչև միջին դա-